

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՐՑԱՆ ԱՆՈՒՇ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՄԱՍՈՒԼԻ ԼԵԶՈՒՆ
(ԲԱՌԱՑԻՆ ԿԱԶՄ, ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ)

Ժ. 02.01-«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մելիքիսանյան Փառանձեմ Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր,
դոցենտ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Գալստյան Աշոտ Վոլոդյայի
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Սարգսյան Մերի Արթուրի
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. ապրիլի 30-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ԲԿԳԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում գործող Լեզվաբանության 019 խորհրդի նիստում (Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ **ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի** գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2024 թվականի մարտի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Միմոնյան Ն.

բան. գիտ. թեկնածու, դոց.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, հեռահաղորդակցության միջոցների հասանելիությունն այսօր դարձրել են լրատվության ստացումը: Էլեկտրոնային լրագրանյութերի սեղմությունը, լրատվության աղբյուրների ստուգման հնարավորությունը, լրացուցիչ տեղեկությունների ստացումը օրեօր մեծացնում են տեղեկատվության ժամանակակից սպառողների լսարանը: Արդի հասարակության մի ստվար զանգված այսօր կախվածության մեջ է ինչպես սոցցանցերից, այնպես էլ առցանց պարբերականներից, մի մեծ հատված էլ տեղեկության պասիվ սպառող է: Էլեկտրոնային թերթերի պահանջարկի շեշտակի աճով և սոցիալական գործընթացների վրա լրատվամիջոցների ունեցած հսկայական ազդեցությամբ պայմանավորված՝ մեծ կարևորություն է ստանում առցանց պարբերականների լեզվի ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Էլեկտրոնային տիրույթում իրացվող լրագրային լեզուն զարգանում է շատ արագ՝ հարստացնելով ժամանակակից հայոց լեզուն: Բառապաշարային տեղաշարժերի հետևանքով պարբերականների լեզվից ժամանակակից հայերեն են անցնում նոր միավորներ, ի հայտ են գալիս խոսքային նոր կաղապարներ, որոշ լեզվատարբեր հնանում են: Էլեկտրոնային լրագրերի լեզուն նաև մերժելի ու օտար տարբեր է պարունակում: Ատենախոսության նպատակն է ներկայացնել էլեկտրոնային մամուլի լեզվի արդի վիճակը: Այդ նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

- վեր հանել էլեկտրոնային մամուլի լեզվի առավել բնութագրական առանձնահատկությունները,
- քննել էլեկտրոնային թերթերի բառապաշարը լայն ընդհանրության մեջ,
- արձանագրել քերականական յուրահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Տեղեկատվական դարաշրջանի լրագրության մասին հայ իրականության մեջ դեռևս ուսումնասիրություններ չկան: Լույս են տեսել որոշ աշխատանքներ էլեկտրոնային տեքստերի, համացանցի լեզվի մասին, սակայն էլեկտրոնային մամուլի խոսքային հիմնականում անդրադարձ չի եղել. ցանցային տիրույթում գործող թերթերի լեզուն և այդ լեզվի ոճական առանձնահատկությունները չեն ուսումնասիրվել: Սույն աշխատանքը առցանց լրատվամիջոցների լեզվի առաջին ուսումնասիրությունն է:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Աշխատանքը կատարվել է մի քանի մեթոդների համադրմամբ: Տեսական դրույթների հիմնավորումներն արվել են էլեկտրոնային մամուլից վերցված օրինակներով: Կիրառվել են վերլուծական, համադրական, նկարագրական մեթոդներ:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 142 էջ է:

Ներածության մեջ ամփոփ ներկայացրել ենք հայ մամուլի լեզվի մասին առկա հիմնական ուսումնասիրությունները, որոնք շատ չեն:

Համաշխարհային լրատվական դաշտի վերակառուցման վրա իր ազդեցությունը թողեց համացանցի ստեղծումը: Ցանցային մեդիան աստիճանաբար գերիշխանության հասավ ավանդական լրատվամիջոցների նկատմամբ: Այսօր արդեն համացանցը թե՛ լուրեր տարածող հիմնական դաշտն է, թե՛ հաղորդակցական միջավայր և թե՛ քարոզչական հարթակ: Էլեկտրոնային մամուլը մեր ժամանակներում ունի հսկայական լսարան, ինչպես նաև դրա վրա ազդելու լայն հնարավորություններ: Ավանդական լրատվամիջոցների համեմատ՝ էլեկտրոնային պարբերականներն ունեն մի շարք անհերքելի առավելություններ, որոնցից են *հիպերտեքստայնությունը, մուլտիմեդիականությունը, ինտերակտիվ բնույթը, անհատականացումը*: **Հիպերտեքստը** տեքստի ներկայացումն է բազմաչափ, աստիճանական կառուցվածքով, ինչպիսին համացանցն է: Այն պարունակում է հղումներ դեպի այլ

փաստաթղթեր, գրաֆիկական օբյեկտներ, տեսաձայնային նյութեր, այսինքն՝ տեղափոխում տեղեկատվական մի հարթակից մյուսը: **Մուլտիմեդիան** (անգլ. multimedia-շատ լրատվամիջոցներ) սովորական տեղեկությունը (տեքստ և գրաֆիկա) միավորում է ձայնի և շարժվող պատկերների (անիմացիոն դրվագներ, տեսահոլովակներ) հետ: Մուլտիմեդիա գործիքների հայտնվելու շնորհիվ հնարավոր է դարձել ստատիկ (տեքստ, գրաֆիկա, նկարներ) և դինամիկ (աուդիո, վիդեո, անիմացիա) բովանդակությունների համակարգչային ինտեգրումը, բազմաչափ տեղեկատվական բովանդակության ներկայացումը մեկ աղբյուրում: **Ինտերակտիվ** տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս ինքնուրույն կառավարել տեղեկատվական հոսքերը, պատվիրել բովանդակություն: Ցանկացած տեքստ ինտերակտիվ է դառնում, եթե ընթերցողը հնարավորություն է ստանում վերակառուցելու այն սեփական պահանջներին համապատասխան: Ընթերցողին ներգրավելով նյութերի վերլուծությանը՝ խմբագրությունը տեղեկություն է ստանում լսարանի իրական պահանջների մասին, հնարավորություն փոփոխելու խմբագրական քաղաքականության ուղղությունները: Էլեկտրոնային լրատվամիջոցների տարբերակիչ հատկանիշներից են նաև **անհատականացումը**՝ տեղեկությունների փոխանցումը ըստ օգտատիրոջ նախասիրությունների անհատականացված որոնումների, մատչելիությունը, հասանելիությունը, արխիվներ ստեղծելու հնարավորությունը, անսահմանափակ աշխարհագրական ծածկույթը: Տպագիր թերթերի ծավալուն նյութերին էլեկտրոնային պարբերականներում փոխարինել են կարճ հաղորդագրությունները, որոնց ընթերցողները ծանոթանում են ժամանակակից հեռախոսներով, առցանց հեռարձակումներով հետևում Կառավարության և ԱԺ նիստերին, իրավապահ համակարգի գործունեությանը, ցույցերին ու մամուլի ասուլիսներին: Այս ամենը ցանցային մամուլը դարձրել են հանրային կարծիքի վրա ազդելու արդյունավետ գործիք:

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԼՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՆՐԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լրատվամիջոցների լեզվի ոճական յուրահատկությունները գերազանցապես պայմանավորվում են ժանրով (ֆր. genre՝ տեսակ, սեռ): Լրագրային ժանրերը միմյանցից տարբերվում են ինչպես ծավալով, խոսքի կառուցման եղանակով ու ձևավորումով, այնպես էլ հեղինակային վերաբերմունքով, լեզվաոճական առանձնահատկություններով: Ռուս լեզվաբան, ոճագետ Գ. Սոլգանիկը ժանրը իրականության հանդեպ վերաբերմունքի արտահայտություն էր համարում¹: Ըստ «իրականության արտացոլման կարողության»՝ առանձնացնում են տեղեկատվական, վերլուծական և գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերը:

Տեղեկատվական ժանրերը (հարցազրույց, հաշվետվություն, ռեպորտաժ, քրոնիկոն, զեկույց, մամուլի տեսություն, լուր և այլն) կոչված են հանրության իրազեկմանը, իրադարձությունների, մարդկանց, երևույթների մասին օբյեկտիվ տեղեկության հաղորդմանը:

Չոր լուրերում լրագրողական գնահատականն ու հետազոտությունը մղվում են երկրորդ պլան. անկողմնակալ լրագրողը հանդես է գալիս որպես իրադարձությունների ընթացքն արձանագրող, տեղեկատվության աղբյուր, միջնորդ՝ առանց սեփական մեկնաբանության: Դրա համար ընտրվում են հուզարտահայտչական գունավորումից զերծ լեզվամիավորներ, լիմաստ բառեր, կայուն շարադասություն:

Մամուլի տեսության ժանրը միջին տեղ է գրավում տեղեկատվական ու վերլուծական ժանրերի միջև, բնորոշվում է գնահատողական բառապաշարի լայն կիրառությամբ: Զգալի է խոսակցական լեզվի ազդեցությունը: Ընտրվում են հատվածներ տպագիր մամուլի ուշագրավ հրապարակումներից: Ընթերցողին առաջարկվում է նյութն ամբողջությամբ կարդալ սկզբնաղբյուրում: Այս բաժնի նյութերը սովորաբար ամենաընթերցվողներից են:

Ավելի ընդարձակ է **ռեպորտաժը**՝ հաղորդագրություն դեպքի վայրից: Իրադարձությունը ներկայացնում է դրան մասնակից, ակնատես լրագրողը: Մուլտիմեդիականության շնորհիվ էլեկտրոնային թերթերի ընթերցողները իրադարձություններին կարող են հետևել իրական ժամանակահատվածում՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեղինակի, մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերը փոխլրացնում են միմյանց: Լրագրողը դրանք համադրում է՝ պահպանելով մտքերի տրամաբանական հաջորդականությունը: Բանախոսի կարծիքը լրագրողն ընթերցողին է ներկայացնում ինչպես գործչի բերանով, այնպես էլ վերաշարադրումով՝ նույնությամբ պահպանելով բովանդակությունը, իր խոսքում էլ մանրամասներ հիշեցնում կատարված իրադարձության մասին: Նյութին կցվում են ուղիղ եղբեր կամ արդեն նկարահանված տեսանյութը, դեպքին առնչվող անձի խոսքը՝ հատվածական կամ ամբողջական, հիմնականում չխմբագրված՝ անհատականացնելու նպատակով: Սովորաբար ավելի դիպուկ մտքերը թողնվում են ուղղակի խոսքում:

Էլեկտրոնային պարբերականների պահանջված ժանրերից է **հարցազրույցը**՝ լրագրողին հուզող հարցերը առաջին ձեռքից ստանալու ամենակարճ ճանապարհը: Հեղինակը միջնորդաբար հանրությանն է ներկայացնում որևէ նշանակալից իրադարձության, հասարակական հնչեղություն ունեցող հարցի վերաբերյալ մարդկանց կարծիքները: Հարցազրույցի լեզվական ձևավորումը, բառապաշարի տարբեր շերտերի ընտրությունը պայմանավորված է լեզվական ու արտալեզվական մի շարք գործոններով, հեղինակի ու գրուցակցի կրթական մակարդակով, թեմայով, խոսքային իրադրությամբ: Սովորաբար պատասխանները ձևավորվում են թերի ու զեղչված, երկկազմ ու միակազմ («Ինչո՞վ բացատրել այս ամենը») նախադասություններով, հարցերը սկսվում են «Ձեր կարծիքով», «Ըստ Ձեզ», «Ի՞նչ եք կարծում», «Ձե՞ք կարծում, որ...», «Կստա՞հ էք», «Համոզվա՞ծ եք» և նմանատիպ ձևակերպումներով, հարցական դերանուններ պարունակող հարցական նախադասությունների տարատեսակներով:

¹ Ст' у Солганик Г., Вакуров В., Кохтев Н., Стилистика газетных жанров, М., Высшая школа, 1978, էջ 9:

Վերլուծական ժանրերում (մեկնաբանություն, հոդված, գրախոսություն, նամակ, հուշագրություն) հեղինակի նպատակը հանգուցային բոլոր պահերի, տրամաբանական կապերի ու հետևանքների բացահայտումն է: Տեղեկատվական ժանրերից դրանք տարբերվում են իրականության անդրադարձման լայնությամբ ու խորությամբ, ընդհանրացումներով ու եզրակացություններով: Ցանցային մամուլի մեկնաբանությունները երկարաշունչ չեն, հաճախադեպ են հուզարտահայտչական երանգավորում ունեցող բառերը, գերիշխում է սպանիչ ծաղրը՝ սարկավոր: Հեղինակն այստեղ վերացարկվում է փաստերից, տրամաբանական եզրահանգումներ անում: Էլեկտրոնային կայքերում մեծաքանակ դիտումներ է ունենում **առաջնորդող** կամ **խմբագրական հոդվածը**, որում ներկայացվում են հասարակական հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ թերթի խմբագրության տեսակետները: Որոշ թերթեր դրանց համար առանձին բաժին են ունենում («Խմբագրական»):

Գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերի (էսքիզ, էսսե, նկարագրություն, ֆելիետոն, պամֆլետ) նպատակը ոչ միայն տեղեկացնելն է, այլև իրականությունը գեղեցիկի օրենքներով ներկայացնելը: Պատկերավորությունն ու զգացմունքայնությունն այստեղ ապահովվում են հուզարտահայտչական երանգավորում ունեցող համապատասխան լեզվամիջոցներով:

Ինչ խոսք, գործնական լրագրությունն ավելի դինամիկ է, քան նրա տեսությունը, և ժանրային այս բաժանումը վերջնական չէ: Լրագրային ժանրերն անընդհատ զարգանում են, և շատ դեպքերում դժվար է որոշել, թե որտեղ է սկսվում կամ վերջանում այս կամ այն ժանրի սահմանը. ավելին, դրանք ի հայտ են բերում այնպիսի հատկանիշներ, որոնք նոր ժանրի առանձնացման հիմք են դառնում: Տեղեկատվական կոչված հաշվետվության, ռեպորտաժի, հարցազրույցի ժանրերը հաճախ դուրս են գալիս տեղեկատվականի սահմաններից և դառնում վերլուծական: Վերլուծական որոշ նյութեր ունեն գեղարվեստական ժանրերին բնորոշ հատկանիշներ: Էլեկտրոնային մամուլում այսօր մաքուր լրագրային ժանրեր գրեթե դժվար է գտնել. դրանք ավելի շատ **հիբրիդային**, ընդհանուր կամ **խառը** ժանրեր են, որոնցում հավասարապես տեղ են գտնում գեղարվեստական, առօրյա-խոսակցական, վարչագործարարական ոճերին բնորոշ տարրեր՝ իրենց հատուկ շարահյուսական կառույցներով:

Էլեկտրոնային թերթերի ամենատարածված ժանրերից են **լուրը, մամուլի տեսությունը, ռեպորտաժը, հարցազրույցը, մեկնաբանությունը, հոդվածը, կարծիքը**: Ցանցային մամուլում ուրույն ժանր է ձևավորվել սոցցանցերի օգտատերերի գրառումներով: «Կարծիք», «Համացանց», «Բոգ», «Սոցցանցեր» բաժիններում գետեղված այդ նյութերն աչքի են ընկնում խոսակցական բառապաշարի ակտիվ կիրառությամբ:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԼԵԶՎԻ ԲԱՌԱՑԻՆ ԿԱԶՄԸ

Մամուլի լեզվում բառագործածությունը պայմանավորված է ինչպես ժանրով ու թեմայով, այնպես էլ հեղինակի անհատականությամբ: Էլեկտրոնային մամուլում գործառնվող բառաշերտերն առանձնացնելիս հաշվի են առնվում նաև մամուլի գործառնությունները. տեղեկատվական-հաղորդակցական գործառնության իրականացման ժամանակ այլ բառապաշար է գործածվում, քարոզչականի ժամանակ՝ այլ, երբեմն էլ այդ բառախմբերը հանդես են գալիս համատեղ: Լրագրային բառապաշարի դասակարգման տարբեր փորձեր են արվել: Չանտեսելով ավելի վաղ արված դասակարգումների դրական կողմերը՝ էլեկտրոնային մամուլի բառապաշարը դասակարգելիս մենք առաջնորդվել ենք գործածության հաճախականությամբ. այդպես նախ առանձնացրել ենք համագործածական կամ ընդհանուր գործածական և ոչ համագործածական կամ սահմանափակ գործածություն ունեցող բառերը՝ գործուն և ոչ գործուն շերտերը, ապա դրանք ներկայացրել ենք խմբերով:

2. 1. Գործուն բառաշերտ. համագործածական բառեր: Գործածական ոլորտի որևէ սահմանափակում չունեցող համագործածական բառերը նաև էլեկտրոնային մամուլի բառապաշարի հիմքն են կազմում: Էլեկտրոնային մամուլում իրացվող համագործածական բառաշերտում առանձին խումբ են կազմում *լրագրային և գնահատողական բառերը*: **Լրագրային բառերը** նպաստում են մամուլի տեղեկատվական գործառնության իրականացմանը: Մրանք բնորոշվում են ոճական չեզոքությամբ ու թեև իրենց իմաստային առանձնահատկություններով շատ բազմազան են, կարելի է խմբավորել այս կերպ՝ **ժամանակ, գործողություն, տեղ նշող բառեր, ասացական բայեր, անձնանուններ, տարբեր կազմակերպությունների, պետական մարմինների, պաշտոնների անվանումներ, իմաստային ընդհանրություն չունեցող բառեր**, որոնցով կազմվում են կապակցություններ, **հասարակական-քաղաքական կյանքին առնչվող, տարբեր հասկացություններ նշող, անվանողական դեր կատարող գաղափարակիր բառեր**: Վերոնշյալ բառամթերքով արագորեն ձևավորվում է լրատվությունը, և ապահովվում է լրագրանյութի միօրինակությունը:

Էլեկտրոնային մամուլում իրացվող ընդհանուր գործածական բառերի շարքում առանձին խումբ են կազմում **գնահատողական բառերը**՝ դրական և բացասական գունավորմամբ:

2. 2. Ոչ գործուն բառաշերտ: Ոչ գործուն բառաշերտի բառերը բնորոշվում են հուզարտահայտչական տարբեր գունավորումներով, կարող են ունենալ հնացածության կամ թարմության երանգներ, հատուկ լինել հասարակության որոշակի խմբերի:

2. 2. 1. Նորաբանություններ և հնաբանություններ: Մեր կյանքում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն իր անդրադարձումն է գտնում լեզվի ամենազգայուն բաղադրիչում՝ բառապաշարում՝ համապատասխան բառի ստեղծմամբ կամ գոյություն ունեցող բառերի իմաստային փոփոխությամբ: Էլեկտրոնային մամուլի բառապաշարում առանձնահատուկ տեղ ու դեր ունեն **դիպվածային բառերը**, որոնք լրագրողական նյութերն ավելի կենդանի ու պատկերավոր են դարձնում: Դիպվածային բառեր են կերտվում գոյականի, ածականի, դերանվան, բայարմատի՝ միմյանց կամ այլ խոսքի մասերի հետ բաղադրմամբ: Այսպես, չսափրված երիտասարդ

պատգամավորների անփորձությունը հեզնելու համար ընդդիմադիր մամուլում շրջանառվում է **թրաշամանուկ** բառը, հեղափոխությանը սերտաճաճներին մամուլը տվեց **թավշակրոն** որակումը: «Ֆեյսբուք» սոցցանցի **ուղիղեթերային գործառույթից** (անգլ. live-կենդանի, ուղիղ միացում) **հաճախակի օգտվողները ստացան լայվասեր բնորոշումը**: **Նույն սոցցանցի ակտիվ օգտատերերը մամուլում արժանացան նաև լայքամոլ, լայքասեր որակումներին**: Ընդդիմադիր մամուլի քաղաքական բառապաշարում լայնորեն շրջանառվում են **-խստ** վերջածանցով և մեկ կամ մեկից ավելի հիմնական ձևայիններով կազմված դիպվածաբանությունները՝ որևէ անձի, գաղափարի հետևորդի, որևէ հատկանիշի կրողի, որևէ բանով տարվածի իմաստներով, ինչպես՝ **թավշխստ, քայլխստ, պայքարխստ, բնապահպանխստ, սելֆիխստ** (անգլ. selfie– ինքնալուսանկար):

Լրատվական բազմաշերտ լեզվի մաս կազմող *հնաբանությունները* լրագրերում տեղ են գտնում ոչ միայն անվանողական արժեքով, այլև ոճական-արտահայտչական նկատառումներով: Մամուլում բառային հնաբանությունները դառնում են հեղինակի վերաբերմունքն արտահայտող պատկերավոր միջոցներ: Իմաստի փոխաբերացմամբ դրանք լայնորեն կիրառվում են ներքաղաքական կյանքն արտացոլող նյութերում, ինչպես՝ «ՀՀԿ-ական կանանց **մատչյան գունդը** Ծաղկաձորում ինստրուկտաժ է ստացել» (hrapararak.am, 24.02.2015), «ԲՀԿ-ն Քոչարյանի **այրուձին է**» (24news.am, 09.04.2020), «Նոր ԸՕ-ն միմյանց հետ կովելու մասին **հրովարտակ է**» (a1plus.am, 27.02.2017), «Արարատ Միրզոյանը **սուրհանդակ է** ուղարկել Ծառուկյանի մոտ» (19.08.2020) և այլն: Ավելի ազդեցիկ լինելու համար լրագրային խոսքը երբեմն կառուցվում է բարձր ու ցածր ոճերի հակադրությամբ հասարակաբանությունների ու հնաբանությունների զուգակցմամբ, ինչպես՝ «Ու վստահ եղեք, որ իր **ժելը կխրախճանի**» (aravot.am, 05.12.2020), «Գովոտոց **հաճախորդաց** հարեմուն» (7or.am, 14.06.2021): Տեղեկատվական ժանրերում գրաբարյան դերանուններով, նախորդավոր ձևերով, քարացած հոլովածներով սպահովվում է պաշտոնական ոճին բնորոշ խստությունը («Ուստի առաջարկվում է շտկել կարգավորումը՝ նախատեսելով իրավական հիմք **խնդրո առարկա** դեպքերում ակցիզային հարկերի գումարները վերադարձնելու համար» (aravot.am, 24.10.2022), «**Ի լրումն** վերը նշվածի՝ Եվրամիության քաղաքացիներին արգելվել է բարձր պաշտոններ զբաղեցնել ռուսական պետական ընկերություններում» (tert.am, 06.10.2022): Խոսքին հանդիսավորություն հաղորդելու նպատակադրումով հնաբաներ են գործածվում քաղգործիչների ելույթներում, ինչպես՝ «**Միով բանիվ** արձանագրենք, որ Հայաստանում քաղաքական, բարոյական ու տնտեսական ճգնաժամը նոր թափ է հավաքում» (news.am, 10.04.2021), «Մեծարգո **տխարք**. . . . » (mamul.am, 11.01.2021): Հնացած լեզվամիավորները մամուլում արտահայտում են նաև կեղծ հանդիսավորություն, քամահրական վերաբերմունք, ինչպես՝ «**Նորին գերազանցության** ձախողումները միլիոններ արժեն» (7or.am, 20.10.2014): Պատկերավոր են վերնագրերում, ինչպես՝ «Մոլագարը և **յուր** սիմուլյանտները» (yerkir.am, 29.05.2019), «Պետական ռեկետ նախարար Ավանեսյանի **ձեռամբ**» (armmlr.am, 02.10.2021): Արտահայտիչ են գրաբարյան դարձվածքները, թևավոր խոսքերը, ինչպես՝ «**Ակն ընդ ական**» (armtimes.com, 24.12.2014), «**Դարձ ի շրջանս յուր**» (168.am, 28.04.2015), «**Չայն բարբառո հանապատի**» (irates.am, 25.09.2020), «**Վասն հայրենյաց, վասն հավատո**» (yerkir.am, 13.11.2020), «Օրվա կադրը. **ունայնություն ունայնությանց**» (hrapararak.am, 28.08.2013), այս կառույցի համաբանությամբ կազմվել է նաև դիպվածային նորաբանություն՝ «**Անմեղսունակություն անմեղսունակությանց**» (yerevan.today, 16.03.2021): Այսպիսի լուծումը արտահայտիչ է դարձնում հրապարակումները, բեռնաթափում հեղինակի խոսքը երկար նկարագրություններից:

2.2.2. Փոխառություններ և օտարաբանություններ: Էլեկտրոնային մամուլի բառապաշարում ամենատարբեր ոլորտներին առնչվող, անվանողական դեր կատարող **փոխառությունները** պատկանելի թիվ են կազմում: Առցանց թերթերում փոխառյալ միավորներն առատորեն կիրառվում են գրեթե բոլոր բաժիններում՝ Ոստիկանության կայքից տեղադրված հաղորդագրություններում, տարադրամի փոխարժեքը, նավթի գները, կորոնավիրուսային հիվանդության թվերը, եղանակի տեսությունը, ՀԵՑ-ից, Ջրային կոմիտեից օրվա հոսանքագրվումներն ու ջրանջատումները ներկայացնող նյութերում, «Մամուլի տեսություն» բաժնում, ինչպես նաև տարատեսակ գովազդերում (*քննչական կոմիտե, արտուրդի ժանր, ավտորիտար պետություն, կորոնավիրուսի թեստ, ինտենսիվ տեղումներ, միջերկրածովյան ցիկլոն, պլանային ջրանջատում, դոլարի, եվրոյի, ռուբլու փոխարժեքները, օմիկրոն շտապ, նավթի ֆյուչերսները, բողոքի ակցիա, ֆոնդային բորսա* և այլն):

Առցանց մամուլում փոխառությունները ծառայում են նաև խոսքի ոճավորմանը, ինչպես՝ «Արյունաբանականի թեման չմարսած՝ Թորոսյանն օրերս մեկ այլ **բորջ**» (tert.am, 25.09.2020), «Իշխանությունները հետևողականորեն **երգիայի** են ենթարկել պետական կառուցակարգը» (pastinfo.am, 05.04.2021), «Քաղաքական **թրաֆիքինգի** գոհերը» (Iragir.am, 17.06.2020) և այլն:

Օտարաբանությունների կիրառությունն արդարացվում է միայն ոճական նկատառումներով, երբ հեղինակը հայերենի բառապաշարից համապատասխան բառ չի գտնում միտքն ավելի ճիշտ ձևակերպելու, նկարագրվածի վերաբերյալ իր հեզնական վերաբերմունքն արտահայտելու համար, սակայն լրատվական կայքերը հաճախ այս լեզվամիավորներին են դիմում ընթերցող գրավելու նպատակով, ինչպես՝ «**Օղիոզ** (նողկալի) դեմքերը, հնարավոր է, Աժ չանցնեն» (yerkir.am, 31.03.2017), «Տեղի է ունեցել մութ գործարք պետական **ռեկետի** (շորթում) հատկանիշներով» (hrapararak.am, 02.11.2021): Վերջին շրջանում մամուլում մեծ թիվ են կազմում անգլերեն բառերով կապակցությունները, որոնցով ավելի պատկերավոր ու ազդեցիկ է դառնում ասելիքը, ինչպես՝ «Հայկ Մարությանը Երևանի 2800-ամյակի միջոցառումների մեծ մասը **քննարկ է արել**» (չեղարկել է. 168.am, 11.10.2018), «Ուարգվում է՝ մեր պատվիրակությանն առավոտ շատ վաղ հյուրանոցից ճամպրուկներով **գոու հում են արել**» (տուն ուղարկել. politik.am, 2019), «Որոշել են **քամ բեք** անել (վերադարձնել) Ֆելիքս Յոլակյանին» (yerkir.am, 11.09.2019), «...բարձր իմիջով, միջազգային ճանաչմամբ, **նյու լել**» (նոր մակարդակ) ֆորմատով խաղացող է մտնում դաշտ» (irates.am, 30.01.2018) և այլն:

2.2.3. **Դարձվածքներ:** Էլեկտրոնային մամուլը՝ իբրև գանգվածային տեղեկատվության և քարոզչության հիմնական միջոց, մեծ չափերով օգտվում է դարձվածքների հարուստ շտեմարանից: Լրագրանյութերում գնահատողական երանգ ունեցող այս միավորների առատությունը պայմանավորված է ոչ միայն մամուլի ներգործման գործառնությամբ, այլև տարասեռ լսարանին մատչելի լինելու նպատակադրմամբ: Փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող այս կապակցությունները առանձնակի կենդանություն են հաղորդում խոսքին և լրագրողական զենքերի շարքում են («Մարտությանի գլխին **սև ամպեր են կուտակվել**» (armeniasputnik.am, 02.07.2021), «Իշխանականները պատրաստվում են ճիշտ պահին **թռչել գնացքից**» (mamul.am, 26.11.2020), «ՀԹԾ-ն **վիզ է դրել**» լեզնեղ Աշոտյանին» (hraparak.am, 14.08.2019), «Օղից բիզնես է **ձեռք գցել**» (lurer.com, 27.04.2018), «Արմեն Մարգարյանը **փափուկ բարձ է դրել**» նախարարի գլխի տակ» (lragir.am, 08.04.2021), «Կարևորը լինեն հլու կամակատար ու **թրի տակով անցած**» (24news.am, 06.04.2021): Դարձվածային միավորների կիրառությամբ մտերմիկ երանգ ու անմիջականություն է հաղորդվում խոսքին, արտահայտվում հեզանք, ինչպես «Պաշտպանական կողմը **կուլիսների հետևում**» (գաղտնի) նիստերը հետաձգելու գործողություններ է իրականացնում» (factor.am, 11.08.2020), «Ում **շվաքի ներքո**» (հովանավորությամբ) է Ս. Պապիկյանը բազմել նախարարի աթոռին» (news.am, 16.04.2021), «Հիշեցնենք, որ Վարագդատ Կարապետյանը ՀՀԿ-ի իշխանության ներկայացուցիչներից էր, բայց հեղափոխությունից **հինգ պակաս** (շուտ) կողմնորոշվել էր» (panorama.am, 26.11.2020), «Երեսուն տարի բոլոր **մատների արանքով** (հպանցիկ) են նայել մշակույթին» (mamul.am, 18.09.2021): Խոսքին վեհություն ու հանդիսավորություն են հաղորդում գրական ճանապարհով փոխանցված, հին հունական, աստվածաշնչյան ծագմամբ դարձվածքները, ինչպես՝ «Ամուլսարի հանքը **դամուկյան սուր** իշխանության համար» (politik.am, 19.05.2020), «**Ավցյան ախոռները** ոչ թե պետք է մաքրվեն, այլ խորտակվեն, որ տեղը պետություն կառուցվի» (lragir.am, 06.05.2018), «**Միզիփոսյան աշխատանք** ԸՕ-ի շուրջ» (a1plus.am, 27.06.2016), «ԲՊ-ի նախընտրական **աքիլլեյան գարշապարը**» (24news.am, 16.04.2021): Բարձր ոճ ստեղծող կայուն կապակցություններին են հակադրվում հասարակաբան, ժարգոնային, օտարաբանություններ պարունակող կառույցները, որոնք պատկառելի թիվ են կազմում մերօրյա ցանցային թերթերում, ինչպես՝ «...քաղաքական ուժերի վարկանիշը **պլենդուրից ցածր**» մակարդակի վրա էր» (aravot.am, 05.10.2016) «Մենք այսօր ունենք դատական համակարգ, որը գտնվում է գործադիրի **դրոքի տակ**» (168.am, 21.10.2019), «...դարաբաղցին...կարող է **փաթթած ունենալ**» ցանկացած բարձր մակարդակի փաստաթուղթ» (azatutyun.am, 01.07.2010) և այլն: Երբեմն լրատվանյութերի հեղինակները վերափոխում են հայտնի առածները. թևավոր խոսքերը. այդպես ասելիքն ավելի տպավորիչ ու ներգործող է դառնում, լրագրողական վերաբերմունքն՝ ընդգծված, ինչպես՝ «**Լավ է ուշ, քան ավելի ուշ**. Աժ-ն քննարկում է «Արտակարգ իրավական ռեժիմի մասին» նախագիծը (henaran.am, 28.02.2012), «**Մածունը սայտակ է**, և դա քննարկելու հարց չէ» (a1plus.am, 19.04.2014), «**Ջրի բերածը հարկայինը կտանի**» (irates.am, 13.06.2017) և այլն:

2. 2. 4. **Ժարգոնային միավորներ եվ գոեկաբանություններ:** Սոցցանցերի ազդեցությամբ էլեկտրոնային մամուլում օրեցօր ավելի ու ավելի է ընդարձակվում խոսակցական բառաշերտը, որտեղ զգալի թիվ են կազմում հասարակաբանությունները, ժարգոնային բառերն ու գոեկաբանությունները: Ժարգոնային բառերի մեջ առանձին խումբ են կազմում ռուսերենից նույնությամբ վերցված կամ աղավաղված բառերը՝ հաճախ սեփական լեզվական միավորների հետ զուգորդված, ինչպես՝ **նակագատ անել** (наказать-պատժել), **պապատ անել** (послать-ուղարկել), **պրիզնատ գալ/չգալ** (признать-ընդունել), **կուրսի պահել** (держат в курсе-գործի ընթացքին տեղյակ պահել) **ռասկրուտկա անել** (раскрыть-պատեցնել, պտույտի գցել, մամուլում հաճախադեպ է՝ գովազդելու իմաստով), **կուռածիտ լինել** (куражиться-լպիրշություն, սանձարձակություն անել, հոխորտալ) և այլն: Փողոցային բառապաշարը և ժարգոնն այսօր «քաղաքական մշակույթի» առանցքում են, իսկ ամենասարսափելին այն է, որ «քուչում պագողների և ճշտից խոսողների» բառապաշարով են հաղորդակցվում նաև իշխանության որոշ ներկայացուցիչներ ու քաղգործիչներ, որոնց խոսքը նույնությամբ արձանագրվում է մամուլում: Ժարգոնային բառերի մեջ մի խումբ են կազմում թուրքերենից, արաբերենից, պարսկերենից բարբառների միջոցով տարածված փոխառությունները, ինչպես՝ **ռաստվել** (թուրք. rast-հանդիպել բառից². «Հեղափոխությունը **ռաստվեց** հանքարդյունաբերությանը» (epress.am, 20.08.2019), **մուֆթա** (թուրք. müft. ձրի, անվճար, կիրառվում է դատարկ տեղը, անհիմն իմաստներով)՝ «Նարեկ Մարգարյանի 117 մլն դրամը **մուֆթա** չի կորչի» (aysor.am, 03.06.2014), **քյասար** (թուրք. kisa-կարճ)՝ «Էս բյուջեն չի կարող լավը լինել քյասար» (news.am, 20.06.2019), **նադդ** (թուրք. nakdi բառից. դրամական, կանխիկ), **նիսյա**–ապառիկ, փիսբ. ոչ իրական. «**Նադդ**» 124 միլիոնն ու **նիսյա**՝ 40 միլիարդը» (7or.am, 29.04.2019), **խուրդվել** (թուրք. խուրդա–«մանր–մունր, հին ու մին բաներ, մանրուք, երկաթի կտորտուք»³. փիսբ. մանրանալ)՝ «Ինչն է ստիպում մարդուն **խուրդվել**», (7or.am, 20.02.2017): Հասարակական-քաղաքական տեղաշարժերն անմիջական ազդեցություն ունեն բառերի վրա և ենթարկում են դրանք իմաստային փոփոխությունների, կատարվում են նաև գնահատողական երանգի փոփոխություններ: Ժարգոնային մի շարք բառեր գրական լեզվում գործածական բառերի իմաստափոխված տարբերակներ են կամ քերականական սխալ ձևեր, ինչպես՝ **քցել**–խաբելով շորթել՝ «Միրիահային **քցել են**», բայց նա միտք չունի լքել Հայաստանը» (a1plus.am, 11.07.2014), **կպցնել**–ձեռք բերել, հաջողեցնել՝ «Եվրոպացիների հետ կապերը **կպցրել**» է հենց Արթուր Աղաբեկյանը, որի հետ առնչվող քրգործը կարճվել է» (news.am, 08.11.2019), **զրել**–չեղարկել՝ «Քրգործը **զրվել է**» (news.am, 03.10.2019), **կթել**–շահագործել, օգտվել՝ «Նա անկախ Հայաստանի քաղաքացի է եղել միայն այն դեպքում, երբ տարբերակ է ունեցել **կթել** մեր պետությունը» (7or.am, 10.02.2020): Էլեկտրոնային պարբերականներում տեղ են

² Տե՛ս **Баскаков А.**, Турецко-русский словарь, М. , изд. Русский язык, 1977, 967 էջ:

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հտ. 3, Մոսկվա-Վարդաշապատ, 1902, 383 էջ:

գտնում նաև ցածր ոճի բառապաշարի մաս կազմող *գռեհկարանություններ*: Իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ այս տարբերն ունեն վառ արտահայտված բացասական երանգ: Բառին հուզական զանազան գունավորումներ հաղորդող այս միջոցների կիրառությունը երբեմն անցնում է թույլատրելի բոլոր սահմանները:

2. 3. Բառային կազմի այլ առանձնահատկություններ: Մասնագիտական բառապաշարը լրատվական խոսույթում կիրառվում է թե՛ տերմինային նշանակությամբ, թե՛ փոխաբերական իմաստով: Էլեկտրոնային մամուլում սովորական է տարբեր ոլորտների գիտական տերմինների գործածությունը («Վիսցերալ ճարպը նվազեցնելու համար առավել արդյունավետ է միջերկրածովյան «կանաչ» սննդակարգը» (news.am, «Medicine», 29. 11. 2022), «Կենդանական ծագման ցածր ածխաջրային սնունդը կապված է 2-րդ տիպի շաքարախտի ռիսկի բարձրացման հետ» (news.am, «Medicine», 19. 12. 2022): Մասնագիտական բառերի ոճավորումը հեղինակից նուրբ լեզվագագացողություն է պահանջում («Նախընտրական ցայտնոտ. կան թեկնածուներ, որ միայն երեկ գիշեր են իմացել, որ տեղ են գտնելու ցուցակում» (shabat.am, 25.05.2021, **ցայտնոտ** շախմատի, շաշկու և սեղանի այլ խաղերում քայլերի վրա մտորելու համար ժամանակի սղություն, այսինքն՝ ժամանակի սղության պատճառով նեղ վիճակի մեջ են հայտնվել), «Ցուցվանգ՝ գլխավոր դատախազի մասնակցությամբ» (168.am, 03.05.2021, **ցուցվանգ** դիրք շախմատում և շաշկիում, որտեղ ցանկացած քայլ հանգեցնում է մատի կամ ավելի վատացնում իրավիճակը. լրագրողն ակնարկում է սեփական քայլի պատճառով վատթար իրավիճակում հայտնվելը):

Էլեկտրոնային մամուլի լեզվում, տեղի ու ժամանակի ինսյուրության սկզբունքից ելնելով, մեծ տեղ է տրվում սեղմությանը նպաստող լեզվամիջոցների գործածությանը, որոնց թվում է *հապավումը*: Լայնորեն շրջանառվում են հայերեն համարժեքներով չբացվող մի շարք մարմինների, դաշինքների, մարզական կազմակերպությունների անվանումներ, ինչպես՝ **ՆԱՏՕ** (անգլ. NATO - Nrt Atlantic Treaty Organization, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն), **ՅՈՒՆԵՍԿՕ** (անգլ. UNESCO - United Nations Educational, Scientific and Cultural Organization, Միավորված ազգերի կրթության, գիտության և կուլտուրայի կազմակերպություն), **ՈՒԵՖԱ** (ֆրանս. UEFA - Union Européenne de Football Assotiations, Ֆուտբոլի ասոցիացիաների եվրոպական միություն), աղբյուր լրատվական գործակալությունների հապավված անվանումներ՝ **ՏԱՄՍ** (*Телеграфное агентство Советского Союза*), **ՌԻԱ** (*Российское информационное агентство*), **ՌԲԿ** (*РосБизнесКонсалтинг*) **ԻՌՆԱ** (*The Islamic Republic News Agency*): Բառակազմական ճկունությամբ առանձնանում են տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների բաղադրյալ անուններից կազմված տառային հապավումները (**ՀՅԴ-ական, ԲՀԿ-ամեն, ԲՀԿ-ոտ, ՀՀԿ-ամերձ, ՄԱԿ-խոտ**):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ **ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՇԱՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

3. 1. Ձևաբանական առանձնահատկություններ: Տեղեկատվական արդի դարաշրջանում, երբ սոցցանցերի օգտատերերի թիվն աճում է աննախադեպ արագությամբ, էլեկտրոնային հարթակներում գերիշխող խոսակցական լեզուն էլ ազդում, ներգործում է գրական լեզվի վրա՝ պարտադրելով իր ձևերն ու օրինաչափությունները: Մամուլում ժողովրդախոսակցական լեզվամիջոցներին դիմելու պատճառներից են գնահատողական երանգի առկայությունը, հանպատրաստից դրսևորումը, անմիօրինակությունը, սեղմությունը: Քերականական յուրահատկություններն էլ պայմանավորվում են նշված հատկանիշներով:

3. 1. 1. Անուն խոսքի մասերի ոճական-գործառական առանձնահատկությունները: Ոճական-արտահայտչական հնարավորություններով առանձնանում է հատկապես *գոյականը*, որի քերականական կարգերը հարուստ են զուգաձևություններով: Էլեկտրոնային մամուլի հրապարակումներում անձնանուններն ու տեղանունները ոճական նպատակադրմամբ երբեմն գործածվում են հոգնակի թվով, վերափոխված վերջով ու վերածվում հասարակ գոյականների: Հոգնակի թվով նշված կիրառություններում ակնարկվում են տվյալ անունները կրող անձանց ամենաբնորոշ հատկանիշները: Արտահայտիչ են տեղանունների՝ հոգնակի թվով կիրառությունները, որոնցով նշվում է տեղի, տարածքի անորոշություն, տարածական լայն ընդգրկում, ինչպես՝ «Տավուշյան դեպքերից հետո, երբ բախումները **ռուսաստաններում** և **լուսերում**, **գերմանիաներում** և եվրոպական այլ երկրներում աննախադեպ զարգացումներ և լարվածություն գրանցեցին, չկար այն կառուցվել, որը կփորձեր կարգավորել հարցերը տեղի կառավարությունների և համայնքների հետ» (livenews.am, 30.07.2020): Էլեկտրոնային մամուլի հրապարակումներում գործառական-ոճական տարբեր արժեքներ են ունենում գոյականի հոլովական զուգաձևերը: Դրանցից առավել գրական, գրքային տարբերակները հանդիսավորություն են հաղորդում խոսքին, ինչպես՝ «ԱՀԿ-ում հայտարարել են COVID-19-ի դեմ պայքարում **հուտ** նշույլների մասին» (armenpress.am, 11.08.2020), «Չինաստանի վերջին **կայսեր** ժամացույցն աճուրդում վաճառվել է ռեկորդային 6.2 մլն դոլարով» (168.am, 26.05.2023), «Կոնգրեսի **մամուլ** հաղորդագրությունը» (ilur.am, 03.02.2022): Էլեկտրոնային լրագրերի էջերում հաճախադեպ են հոգնակի թվի՝ խոսակցականին բնորոշ կանոնախախտ կազմությունները («Լավ **տղերքով** ու **սխալներով** հավաքվել ու որոշել են մի բան անեն մեր երկրում» (factor.am, 13.02.2019, «Փաստորեն, Աժ-ն **ձեռները** լվաց» (168.am, 15.02.2019), «**Երեխեք** ջան, փող չկա» (politik.am, 19.12.2019): Իր գնահատողական դերով ոճական բազմապիսի երանգավորումներ ունի ածականը: Խոսակցական լեզվի ներգործությամբ էլեկտրոնային մամուլում ածականի բաղադրական աստիճանի առավելակա տարատեսակը կազմելիս **ավելի/առավել** ձևերից նախապատվություն է տրվում **ավելի** բառին, գերադրականի **ամենից/ամենա/-ագույն** ձևերից **ամենա**- նախածանցին, որոնք ոճական առումով չեզոք են: **Առավել**, **-ագույն** միավորները խոսքին հանդիսավորություն ու վերամբարձ երանգավորում են հաղորդում: Ասելիքի կարևորությունն ընդգծելու նպատակով ածականների համեմատության աստիճանները կազմվում են կանոնախախտ ձևերով (**ամենալավագույն, ամենախայտառակագույն**):

Իմաստային բազմազանությունը նաև *դերանունների* խոսքիմասային առանձնահատկություններից է: Մամուլի լեզվում արտահայտչականությամբ առանձնանում են հատկապես *անձնական, ցուցական, հարցահարաբերական* դերանունները: Ոճական որոշակի երանգավորում են արտահայտում տարբեր դեմքերի հակադրությունները, ինչպես՝ «**Մեր** լեզուն, **ձեր** խոսքը» (hraparak.am, 15.06.2010), «**Իմ** «Հայկական վերածնունդը» **քո** «Հայկական վերածննդին» վնաս չէ» (news.am, 17.02.2016): Խոսքն ազդեցիկ ու հուզական է դառնում դերանունների կրկնությամբ: Ուղղակի խոսքում նախապատվություն է տրվում ցուցական դերանունների խոսակցական տարբերակներին («**Տենց** էք անում, որ **սենց** չափերներն անցնում են» (hraparak.am, 13.11.2019)): Ինչ խոսք, առավել հաճախ այս միավորները խոսքում թողնվում են միտումնավոր՝ խոսողի կրթական մակարդակը ի ցույց դնելու նպատակով, ինչպես՝ «Ընտրողները մեզ ձեն էին տվել, որ Արցախը կարանայինը պահեինք, բայց **սենց** ստացվավ» (yerkir.am, 20.01.2021):

3. 1. 2. Բայը էլեկտրոնային մամուլում. Ժամանակի քերականական կարգի դրսևորումները: Սույն ենթաբաժնում փորձել ենք պարզել, թե բայի եղանակաժամանակային որ ձևերն են գերիշխում էլեկտրոնային մամուլի լեզվում: Նախ քննել ենք ներկայի ձևերը առցանց մամուլի լեզվում: Նկատենք՝ ՁԼՄ-ում խոսքը հիմնականում կառուցվում է **սահմանական եղանակի** ժամանակաձևերով, որոնք իրողությունը, փաստը արձանագրելու, ներկայացնելու ոճականորեն չեզոք միջոցներ են՝ ի տարբերություն մյուս եղանակների, որոնք սուբյեկտիվ վերաբերմունք են արտահայտում⁴: Ներկա ժամանակը շարունակում է մնալ առավել գրավիչ և նկարագրող նորությունների համար, քանի որ գործողությունը տեղի է ունենում տվյալ ժամանակամիջոցում, որն ընդգծում է իրադարձության նորությունը, մինչդեռ տպագիր լրատվամիջոցների տեքստերի հեղինակները չեն կարող օգտագործել այս ժամանակաձևը որոշակի տեղեկատվություն փոխանցելու համար, քանի որ լուրերի ստեղծման պահից մինչև մեղիա արտադրանքի սպառումը որոշակի ժամանակահատված է անցնում: Այսինքն՝ ներկայով ապահովում է լուրերի թարմությունը: Այն հիմնականում գործածվում է տեղեկատվության աղբյուրի նշումներում (հղումներում)՝ «Ինչպես հայտնում է Reuters-ը» (armenpress.am, 30.01.2021), «Կառավարությունից փոխանցում են, որ...» (azatutyun.am, 16.05.2021): Ուղիղ հեռարձակումները տեղադրելիս ևս լրագրողները նախընտրում են անկատար ներկան, ինչպես՝ «Նիկոլ Փաշինյանը վարում է Կառավարության նիստը» (a1plus.am, 03.06.2021), «Ֆորիդարանը քննարկում է ԱԾ նախագահի ընտրության հարցը» (azatutyun.am, 02.08.2021): Անհանձնարարելի կիրառություններից նշելի է օժանդակ *է-ի* փոխարեն *ա-ի* գործածությունը, ինչպես՝ «Տնտեսությունը ծանրոր վիճակից **էթում ա** լավ վիճակի» (mediamall.am, 05.05.2017), «Էս մարդը ինչ ասում ա, սուտ ա» (mamul.am, 20.04.2018): Անցյալ ժամանակի՝ քանակապես գերակշռող ձևերը՝ տեղեկատվական ստույգ բովանդակությամբ, օգնում են ճշգրիտ վերստեղծելու տեղի ունեցած իրադարձությունը: Էլեկտրոնային թերթերի լեզվում անցյալի ժամանակային ձևերից գերիշխողը վաղակատարն է («ՀՀ ԱԾ նախագահն ընդունել է Հայաստանում Արգենտինայի դեսպանին» (factor.am, 26.05.2021), «ԱՀԿ-ն հայտարարել է, որ աշխարհում ավելի քան 2,6 մլն մարդ է վարակվել մեկ շաբաթում» (Iragir.am, 30.06.2021)): Կիրառական հաճախականությամբ առցանց մամուլում հաջորդը անցյալ կատարյալ ժամանակն է, որը, ի տարբերություն վաղակատարի, ցույց է տալիս խոսելու պահին ավելի մոտ գործողություն: Ակնթարթորեն թարմացվող առցանց լրահոսում հաճախակապես են անցյալում առանց տևականության կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն նշող բայերը, ինչպես՝ «Ալեն Սիմոնյանն ընտրվեց ԱԾ նախագահ» (hetq.am, 02.08.2021): Անկատար անցյալը առցանց թերթերում հիմնականում զիջում է նախորդ ժամանակաձևերին: Չավարտվածությունն այս դեպքում վերաբերում է ոչ թե որևէ գործողության վիճակին, այլ այդ գործողությունների կրկնությանը, որը տեղի է ունենում անորոշ չափով՝ անորոշ անցյալ ժամանակամիջոցում⁵, ինչպես՝ «Մեզ նախկինում սպառնում էին պատերազմով, այսօր՝ խաղաղության համաձայնագրով» (tert.am, 29.07.2021): Սահմանականի ժամանակաձևերին կիրառական հաճախականությամբ հաջորդում են ենթադրական եղանակի ձևերը, ընդ որում, հիմնականում ապառնիով, ինչպես՝ «Ֆրանսիան կդիտարկի պաշտպանության ոլորտում Հայաստանի հայտը» (news.am, 23.07.2021), «Պարոն դեսպանը կներկայացնի իր տեսլականը» (Iragir.am, 22.01.2018): Սրանց զիջում են ենթադրականի անցյալի ձևերը, որոնք հիմնականում հանդիպում են ստորադասական նախադասություններում, ինչպես՝ «Մարդիկ տարիներով սպասում էին, թե ինչ որոշում կկայացներ ՄԻԵԴ-ը» (հանգման խնդիր երկրորդականում, armlur.am, 19.06.2019):

3. 2. Շարահյուսական առանձնահատկություններ: Ի տարբերություն տպագիր մամուլի՝ էլեկտրոնային պարբերականներում նախապատվություն է տրվում կարճ նյութերին, առավելագույնս գործում է տեղի ու ժամանակի խնայողության սկզբունքը:

3. 2. 1. Նախադասությունը էլեկտրոնային մամուլում: Առցանց թերթերում, որոնցում ակնթարթորեն թարմացվում է լրահոսը, հանպատրաստից խոսքն ավելի իշխող է, նյութերը ձևավորվում են պահի, լսարանին արագորեն իրազեկելու նպատակով. «**Հրատապ քիչ առաջ ՄԻԵԴ-ը բավարարեց ՀՀ Կառավարության պահանջը և միջանկյալ միջոց կիրառեց Թուրքիայի նկատմամբ**» (yerkir.am, 06.10.2020), «**Արտակարգ ու ողբերգական դեպք Երևանում....**» (hayeli.am, 05.04.2021), «**Ուշադրություն. սպասվում է ջերմաստիճանի կտրուկ անկում**» (armtimes.com, 03.04.2018), «**Շտապ երկրաշարժ Երևանում**» (armlur.am, 28.12.2011).... տպագիր մամուլում հազվադեպ են նման վերնագրերը:

⁴ Տե՛ս **Ավետիսյան Յու.** և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Բ, Ե., ԵՊՀ հրատ., 2015, էջ 267:

⁵ Տե՛ս **Պողոսյան Պ.**, Բայի եղանակաժամանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Ե., ԵՊՀ հրատ., 1959, էջ 62:

Լրատվանյութի լեզվական ձևավորումը կատարվում է առաջին հերթին *երկկազմ պատմողական նախադասություններով*, որոնք տեղեկատվական ժանրերի լեզվական հիմքն են: Պաշտոնական բնույթի հաղորդագրություններից վերցրած լուրերում (որևէ գերատեսչությունում տեղի ունեցած հանդիպման ժամանակ) տարածված են *կրավորական կառույցները* «Ուշադրություն է դարձվել նաև կորոնավիրուսային վարակի տարածմանը հակազդելու խնդիրներին...» (aysor.am, 22.01.2021), «Երկուստեք կարևորվել է հանրապետությունում կայունության պահպանումը» (a1plus.am, 09.06.2018) Ոճականորեն ակտիվ այս կառույցները ապահովում են ժանրի չեզոքությունը, վերամբարձություն ու հանդիսավորություն հաղորդում ասելիքին: Կրավորական կառուցվածքի նախադասության մեջ ընդգծվում է գործողության գաղափարը, և իջեցվում է գործողություն կատարողի դերը: Կրավորական կառույցի գործածությունը ունի նաև մեկ այլ միտում՝ «քողարկել, թաքցնել» գործողություն կատարողին:

Միայն մեկ տեսակի նախադասությունների գործածությունը միօրինակություն է հաղորդում խոսքին, սահմանավակում ընթերցման հավանականությունը: Ահա թե ինչու մամուլին բնորոշ են առավելապես խառը տիպի նախադասությունները: Լրագրային միևնույն տեքստում լրագրողները հավասարաչափ կիրառում են շարահյուսական տարբեր կառույցներ, ուղղակի կամ անուղղակի, միջնորդավորված խոսքեր, շարահյուսական հոմանիշներ՝ միևնույն միտքն արտահայտելով տարբեր ձևերով: Տեղի ու ժամանակի խնայողությամբ պայմանավորված՝ էլեկտրոնային լրագրանյութերում լայն տարածում ունեն *անենթակա և անդեմ նախադասությունները, դերբայական դարձվածով* կառույցները: Եղելության արձանագրման հիմնական միջոցներից են *բարդ նախադասությունները*, որոնք խոսքին հաղորդում են ճշգրտություն, ընդգծում դատողությունների պատճառահետևանքային կապը: *Շարահարական կապակցությունները* արագ խոսք են ձևավորում, ապահովում ասելիքի սրությունը, հուզականությունը («Քաղաքացիները դժգոհում են կոմունալները վճարելու հնարավորություն չունեն» (azatutyun.am, 04.25.2020), «Նախագահականից ասում են՝ վաղվա հանդիպման ձևաչափն անիրագործելի է» (PAN.am, 12.03.2021):

3. 2. 2. Խոսքային կաղապարներ: Սեղմությունը, քիչ բառերով լիարժեք տեղեկատվություն հաղորդելը, արագորեն իրազեկելը, ժամանակակից ընթերցողի լայնածավալ նյութերը բաց թողնելու հակվածությունը անխուսափելի են դարձնում ցանցային խոսույթում պատրաստի միավորների կիրառությունը: Էլեկտրոնային արդի մամուլում լրահոսը թարմացվում է ակնթարթորեն, և անխուսափելի է դառնում նշված միավորների գործածությունը: Կաղապարներն ավելի տարածված են տեղեկատվական ժանրերում՝ արտահայտված ինչպես բառակապակցություններով, դերբայական դարձվածներով, այնպես էլ միակազմ ու երկկազմ, համառոտ ու ընդարձակ նախադասություններով («Կառավարությունից ստացած տեղեկությունների համաձայն», «Շատ տարածվող լուրերի», «Հավաստի (քաջատեղյակ, լավատեղյակ) աղբյուրների փոխանցմամբ», «Ինչպես հայտնում են (փոխանցում են, տեղեկացնում են, պնդում են) լավատեղյակ աղբյուրները», «Դատելով վերջին դեպքերից...», «Հաշվի առնելով...», «Ավելի մանրամասն՝ սկզբնաղբյուր կայքում», «(անուն ազգանուն)–ի ֆեյսբուքյան էջից», «Տեսանյութը և լուսանկարները ստորև», «Տարածելը խրախուսվում է», «Մանրամասները՝ քիչ անց», «Ավելի վաղ հայտնել էինք, որ» և այլն: Կաղապարայնացած է իրավական խոսույթը (դեպքի առթիվ քրգործ է հարուցվել ... հասկանալիչներով, պարզվում են հանգամանքները, բերման է ենթարկվել, նախաքննությունը շարունակվում է, անհազանց է ստացվել): Լրագրային կաղապարները ժամանակի պահանջ են. առցանց թերթերում դժվար է գրել արագ՝ չօգտվելով նման միավորներից:

3.2. 3. Վերնագրերը էլեկտրոնային մամուլում: Տեղեկատվությունն ավելի գրավիչ մատուցելու և ավելի լայն լսարան ներգրավելու, ինչպես նաև դրա ընկալումն ավելի արդյունավետ դարձնելու գործում մեծ դեր ունեն վերնագրերը: Տեղեկատվական ժանրերում հիմնականում գերիշխող են փաստերի չոր շարադրանք պարունակող վերնագրերը՝ ձևավորված լրագրողի չեզոք վերաբերմունքով (հմտ. «Էյֆեյյան աշտարակը փակել են պայթյունի սպառնալիքի պատճառով» (armenpress.am, 23.09.2020): Առցանց պարբերական մամուլի հրապարակումների վերնագրերի լեզուն աչքի է ընկնում լեզվական միջոցների բազմազանությամբ, լեզվի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների առատությամբ: Բացի բառապաշարային ավանդական շերտերից՝ լրատվանյութերում հանդիպում են ոչ ավանդական միավորներ, որոնցից են դիպվածային բառերը՝ իրենց բնորոշ անսպասելիությամբ («Աղբբեջանոտ վերնագրերին չեմ անդրադառնա, ուղղակի ամոթ է» (168.am, 24.05.2019), «Հարգելի՛ ձերքայականներ, քա՛յլ արեք...» (news.am, 24.05.2020): Սոցցանցերի ազդեցությամբ արդի էլեկտրոնային մամուլը հեղեղված է օտարաբանություններով, հասարակաբանություններով, ժարգոնային բառերով ու գռեհիկ արտահայտություններով, որոնք չեզոք գրական լեզվի ֆունի գրավում են ընթերցողների ուշադրությունը, ինչպես՝ «Թքած ունենալուց մինչև փաթեթած ունենալը մեկ քայլ է» (hraparak.am, 19.03.2019), «Հանրակրթական դպրոցներում՝ քաղաքական չիստկա» է սպասվում» (irates.am, 09.09.2020), «Պետական ապարատը խող են տվել Օտտոկյանի դեմ» (news.am, 09.09.2020): Վերնագրերի կառուցման ազդեցիկ հնար է հականշությունը. հակադրությամբ կազմված խոսքն ավելի հուզական է ու ազդեցիկ, ինչպես՝ «ՄՄ թե՛ ԵՄ. բացասական ու դրական կողմերը» (a1plus.am, 25.02.2014), «Գնա՛լ, թե՛ մնալ. այս է խնդիրը» (aravot.am, 28.06.2015), «Էդմոն Մարուքյանը կգնա լուսավոր, թե՛ մութ ճանապարհով» (7or.am, 22.06.2020), «Փնթինթոն ց, թե՛ կյանք...» (armtimes.com, 10.04.2020): Առանձին խումբ են կազմում ոճական ընդգծված երանգավորմամբ հռետորական հարցումները, երբ լրագրողն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է թիրախի վրա («Մի՛ թե նախարարի համար դժվար է խոսել Տեղապահության մասին» (artsakhpress.am, 23.04.2015)): Երբեմն հեղինակն ինքն էլ հնարավոր պատասխանն է առաջարկում՝ «Ինչի՛ վրա է Կառավարության հույսը: Գուցե վարկերի» (168.am, 22.06.2019): Վերնագրերի լեզվական աստղծ են ծառայում նաև տարբեր ստեղծագործություններ (ամերիկացի ժամանակակից գրող Մարկ Մենսոնի հայտնի գրքի վերնագրի («Թքած ունենալու նուրբ արվեստը») նմանությամբ՝ «Թոնելու նուրբ արվեստը» (mamul.am, 25.08.2020), «Ժողովրդին

շեղելու նուրբ արվեստը» (hayeli.am, 28.08.2019), **«Ասֆալտին փռելու» նուրբ արվեստը»** (hraparak.am, 06.03.2020) և այլն): Վերնագրեր ստեղծելու ազդեցիկ հնար են ոճական բանադարձումները (բառախաղի օրինակներ՝ **«Մի՛ դիր դիմակ, որ չդառնաս դիակ»** (hayeli.am, 13.08.2020), **«Կանաչող Սևանն ու «կանաչով» բնապահպանները»** (7or.am, 27.07.2020), «կանաչով», այսինքն՝ ԱՄՆ դոկարով, այսինքն՝ վարձված բնապահպանները, շրջասույթ՝ **«Ապշերոնյան սնապարծը** կրկին դատարկաբանությունների և ցածրորակ բարբաջանքների տարափ է տեղացել Հայաստանի հասցեին» (news.am, 07.07.2020), խոսքը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի մասին է):

3. 2. 4. Շարահյուսական մեթոդի կիրառություններ: Եթե տեխնիկական չափանիշներով այսօրվա մամուլը հիմնականում բավարարում է իր լսարանին, և վստահաբար կարելի է ասել՝ դեռ կկատարելագործվի այդ առումով, ապա նույնը չի կարելի ասել լրագրային լեզվի որակի մասին: Լրագրային լեզուն առավելապես աղճատում են սոցցանցերից առանց խմբագրման կատարված պատճենումները, մեծաթիվ են միջազգային լրահոսի անհաջող թարգմանությունները: Առկա թերությունների մի մասն էլ հետևանք է հայոց լեզվի շարահյուսական օրինաչափությունների չիմացության կամ էլ սեփական խոսքի հանդեպ անփույթ վերաբերմունքի: Ուսումնասիրելով հայաստանյան էլեկտրոնային տիրույթում գործող մի քանի տասնյակ պարբերականների լեզուն՝ ներկայացրել ենք ժամանակակից գրական հայերենի նորմերից ամենատարածված շեղումները՝ *ռուսերեն բառակապակցությունների անհաջող թարգմանություններ, խնդրատական սխալներ, թվային անհամաձայնության դեպքեր, շարադասական սխալներ:*

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Շուրջ վեց տասնյակ առցանց պարբերականների լեզվի ուսումնասիրությամբ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Մամուլի լեզվում բառագործածությունը պայմանավորված է ինչպես ժանրով ու թեմայով, այնպես էլ հեղինակի անհատականությամբ: Էլեկտրոնային մամուլի բառապաշարի հիմքն են կազմում գործառական ոլորտի որևէ սահմանափակում չունեցող *համագործածական* բառերը: Գործուն բառաշերտում առանձնացվում են *լրագրային* և *գնահատողական բառերը*՝ դրական և բացասական գունավորմամբ:
2. Էլեկտրոնային մամուլի լեզվի անկապտելի մասն են նորաբանությունները: Մամուլի բառապաշարը մշտապես թարմանում է ինչպես *իմաստային նորաբանություններով*, այնպես էլ պահի թելադրանքով ստեղծված *դիպլոմատիկ բառերով*:
3. Լրատվական բազմաշերտ լեզվի մաս են կազմում *հնարանությունները*:
4. Էլեկտրոնային մամուլի բառապաշարում պատկառելի թիվ են կազմում *փոխառությունները*. գնահատողական երանգով կիրառվելով դրանք դիպուկ ու պատկերավոր են ներկայացնում ասելիքը:
5. Մամուլի լեզվում ոճական տարբեր գործառություններ ունեն *օտարաբանությունները*. նպաստում են գործիչների տիպականացմանը, նրանց խոսքի երգիծական ոճավորմանը, միջավայրի ու ժամանակի նկարագրությանը:
6. Իբրև ժողովրդախոսակցական լեզվի ու ոճի տարբեր՝ իրենց կենդանությամբ ու պատկերավորությամբ լրագրողի ասելիքը ավելի արտահայտիչ են դարձնում *դարձվածքները*:
7. Սոցցանցերի ազդեցությամբ օրեցօր ավելի ու ավելի է ընդարձակվում խոսակցական բառաշերտը, որտեղ զգալի թիվ են կազմում *ժարգոնային բառերը*: Դրանցում առանձին խումբ են կազմում ռուսերենից նույնությամբ վերցված կամ աղավաղված բառերը՝ հաճախ սեփական լեզվական միավորների հետ գույքորոշված, թուրքերենից, պարսկերենից, արաբերենից վերցված բառերը: Առանձին խումբ են կազմում գրական լեզվում գործածական բառերի իմաստափոխված տարբերակները կամ քերականական սխալ ձևերը:
8. *Մասնագիտական բառապաշարը* լրատվական խոսույթում կիրառվում է թե՛ տերմինային նշանակությամբ և թե՛ փոխաբերական իմաստով:
9. Տեղի ու ժամանակի խնայողության սկզբունքից ելնելով՝ մեծ տեղ է տրվում սեղմությանը նպաստող լեզվամիջոցների գործածությանը, որոնցից է հապավումը:
10. Սոցիալական հարթակներում զերիշխող խոսակցական լեզուն ազդում, ներգործում է գրական լեզվի վրա՝ պարտադրելով իր ձևերն ու օրինաչափությունները: Կանոնախախտ ձևերը կիրառվում են խոսքը կենդանի ու պատկերավոր դարձնելու, ասելիքին անմիջականություն հաղորդելու, խոսողներին տիպականացնելու, կրթական մակարդակը դիտմամբ ի ցույց դնելու նպատակադրումով:
11. Լրագրողները բայի եղանակաժամանակային այս կամ այն ձևին են նախապատվություն տալիս՝ ելնելով լրատվական ժանրի առանձնահատկություններից, սեփական լեզվամտածողությունից ու ճաշակից: ՉԼՄ-ում խոսքը հիմնականում կառուցվում է *սահմանական եղանակի* ժամանակաձևերով:
12. Լրատվանյութի լեզվական ձևավորումը կատարվում է առաջին հերթին *երկկազմ պատմողական նախադասություններով*: Պաշտոնական բնույթի հաղորդագրություններում տարածված են *կրավորական կառույցները*: Խոսքին սեղմություն ու հուզականություն են հաղորդում *անդեմ նախադասությունները, դերբայական դարձվածով* կառույցները: Եղելության արձանագրման հիմնական միջոցներից են նաև *բարդ նախադասությունները*: *Շարահարական կապակցությունները* նպաստում են տեղի ու ժամանակի խնայողությանը, ձևավորում արագ խոսք, ասելիքը դարձնում հուզական ու ազդեցիկ:

13. Էլեկտրոնային պարբերականների հրապարակումներում անփոխարինելի տարր է *կադապարը*, որի կիրառությամբ ցանկացած տեղեկություն փոխանցվում է արագ ու սեղմ: Էլեկտրոնային թերթերի բնույթը թելադրում է կիրառվող բառապաշարի առավելագույն կադապարայնացում:
14. Առցանց պարբերական մամուլի հրապարակումների *վերնագրերի լեզուն* աչքի է ընկնում լեզվական միջոցների բազմազանությամբ, լեզվի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների առատությամբ: Ընտրվում են ինչպես չեզոք, այնպես էլ ոճական գունավորմամբ, հեղինակային ակնհայտ վերաբերմունք արտահայտող լեզվամիավորներ, և ժանրից ժանր գործ ունենք տարբեր պատկերների հետ:
15. Սոցանցերի ազդեցությամբ էլեկտրոնային լրագրանյութերում տեղ են գտնում ժամանակակից գրական հայերենի նորմերից տարաբնույթ շեղումներ: Դրանցից են ռուսերեն կապակցությունների ու քերականական ձևերի բառացի անհաջող թարգմանությունները, տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող կապերով ռուսաբան կառույցների գործածությունը, անհարթ շարադասության, թվային անհամաձայնության դեպքերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. **Խաչատրյան Ա.**, Էլեկտրոնային մամուլի հրապարակումների վերնագրերի լեզվական առանձնահատկությունները // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2020, թիվ 1 (54), էջ 73-85:
2. **Խաչատրյան Ա.**, Խոսքային պատրաստի կադապարները էլեկտրոնային մամուլի լեզվում // Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2021, Ա պրակ, էջ 50-62:
3. **Խաչատրյան Ա.**, Էլեկտրոնային մամուլի տեղեկատվական ժանրերի շարահյուսական մի քանի առանձնահատկություններ // Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի, 2021, թիվ 1 (37), էջ 115-126:
4. **Խաչատրյան Ա.**, Իմաստային և դիպվածային նորաբանությունները հայաստանյան էլեկտրոնային մամուլում (2018-2019 թթ.) // ՎԷՄ, 2020, թիվ 2, էջ 95-11:
5. **Խաչատրյան Ա.**, Ժարգոնը էլեկտրոնային մամուլի էջերում // Հայագիտական հանդես, 2021, թիվ 2 (51), էջ 26-36:
6. **Խաչատրյան Ա.**, Բայի եղանակային ձևերը էլեկտրոնային մամուլի լեզվում // Լրաբեր Հայ-ռուսական համալսարանի, 2021, թիվ 3/2021 (39), էջ 168-179:

ХАЧАТРЯН АНУШ АНДРАНИКОВНА ЯЗЫК ЭЛЕКТРОННОЙ ПРЕССЫ (ЛЕКСИКА, ГРАММАТИЧЕСКАЯ СИСТЕМА)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык»

Защита состоится 26 апреля 2024 г. в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета КВОН 019 по лингвистике, действующего при Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича/ 15)

РЕЗЮМЕ

Актуальность темы

Бурное развитие информационных технологий, доступность телекоммуникаций сегодня облегчили получение информации, и современное общество уже сложно представить без электронных средств массовой информации. Значительная часть этого общества зависит как от социальных сетей, так и от онлайн-пресса, а значительная часть является пассивным потребителем информации. Принимая во внимание резкое увеличение спроса на электронные газеты и то, что в армянских реалиях язык прессы в этой области не изучен, а со времени последней работы по языку газет прошло более десяти лет, этим исследованием мы попытались внести свой небольшой вклад в существующую исследовательскую базу данных по армянскому языку.

Цели и задачи исследования

Журналистский язык в электронной сфере развивается очень быстро, обогащая современный армянский язык. В результате лексических сдвигов из языка периодической печати в современный армянский язык переходят новые единицы, появляются новые речевые обороты, некоторые языковые элементы устаревают. Язык электронных газет также содержит неприемлемые и иностранные элементы. Цель диссертации – представить современное состояние языка электронных СМИ. В связи с этим возникают следующие проблемы.

1. выделить наиболее характерные черты языка электронной прессы,
2. изучить лексику электронных СМИ в целом, выделить наиболее характерные черты этого языка,
3. зафиксировать грамматические особенности.

Научная новизна диссертации

В армянской действительности до сих пор нет исследований о журналистике информационного периода. Есть несколько работ об электронных текстах, языке Интернета, но речь электронной прессы не затрагивалась. язык газет,

действующих в сетевой среде, и стилистические особенности этого языка не изучены. Данная работа является первым исследованием языка интернет-СМИ.

Методология работы

Работа выполнена путем комбинации нескольких методов. Обоснования теоретических положений были сделаны примерами, взятыми из электронных СМИ. Использовались аналитические, сравнительные, описательные методы.

Структура диссертации

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подразделами, заключения и списка использованной литературы.

Во введении представлен краткий обзор основных исследований по языку армянской прессы.

В первой главе ("Лингвистическая характеристика газетных жанров") упомянуты основные журналистские жанры, наиболее популярные в электронной прессе.

Во второй главе ("Словосостав электронной прессы") исследованы активные и неактивные словарные пласты электронных СМИ.

В третьей главе ("Грамматические особенности") рассмотрены морфологические и синтаксические особенности, характерные для языка электронных газет.

В заключении обобщены основные результаты научного исследования.

Общий объем диссертации составляет 142 страницы.

ANUSH ANDRANIK KHACHATRYAN LANGUAGE OF THE ELECTRONIC PRESS (VOCABULARY, GRAMMAR)

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.01, «Armenian Language»

The defense will be held on 26 April, 2024 at 15⁰⁰, at the session of Specialized Council on Linguistics of 019 HESC RA
in the Institute of Language after Hr. Acharian NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

The relevance of the research: The rapid development of information technologies, the availability of telecommunications have made it easier to receive information today, and it is already difficult to imagine modern society without electronic media. A significant mass of that society is addicted to both social networks and online periodicals, and a large part is a passive consumer of information. Taking into account the sharp increase in the demand for electronic newspapers and the fact that in Armenian reality, the language of the press has not been studied in that domain, and more than a decade has passed since the last work on the language of newspapers, with this study we tried to make our small contribution to the existing research database on the Armenian language.

The aims and objectives of the research: Journalistic language in the electronic domain is developing very quickly, enriching the modern Armenian language. As a result of lexical shifts, new units are transferred from the language of periodicals to modern Armenian, new speech patterns appear, some linguistic elements become obsolete. The language of electronic newspapers also contains objectionable and foreign elements. The aim of the dissertation is to present the current state of the electronic media language. Due to this purpose, the following objectives arise.

1. highlight the most characteristic features of the language of electronic press,
2. to examine the vocabulary of the electronic media in general, to highlight the most characteristic features of that language,
3. to record the grammatical peculiarities.

The scientific novelty of the thesis: There are still no studies about information age journalism in the Armenian reality. There are some researches about electronic texts, the language of the Internet, but the language of the electronic press has not been addressed yet. The language of newspapers operating in the network domain and the stylistic features of that language have not been studied. This paper is the first study of the language of online media.

The methodology of the work: The work was done by combining several methods. The justifications of the theoretical propositions were made with convincing examples taken from the electronic media. Analytical, comparative, descriptive methods were used.

The structure of the thesis: The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subchapters, conclusions and references.

In the introduction a short review of the study of the Armenian language of the press is presented.

In the first chapter ("Linguistic characteristics of newspaper genres"), the main journalistic ge